

## ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ԳԵՐՄԱՆԻԱՆ ԵՎ ՄԵԾ ԵՂԵՌՆԸ

### Ա.Ն. Հայրունի

Պաշտոնական Գերմանիան սկզբից և այսօք հանդուրժողական դիրքորոշում էր որդեգրել հայ ժողովրդի տեղահաննան և բնաշնչման՝ թուրքական կառավարության քաղաքականության նկատմամբ: 1915 թ-ին նա բավարարվում էր ժամանակ առ ժամանակ թուրքական կառավարությանն ուղղվող նախազգուշացումներով և առարկություններով, որոնք ունեին երկու հիմնական նպատակ: նախ գերմանական կառավարությունը դրանցով փորձում էր հայտնել հայ ժողովրդի բնաշնչման թուրքական քաղաքականության հանդեպ իր անհամածայնությունը հետագայում մեղադրանքներից խուսափելու համար: Եվ երկրորդ՝ նա փորձում էր այն պատրանքը ստեղծել, թե դիվանագիտական ուղիներով անում էր հնարավոր ամեն բան՝ հայերի սպանող կասեցնելու համար:

Ինչ վերաբերում էր Թուրքիայի վրա կոչտ ճնշում գործադրելու միջոցով հայերի բնաշնչումը կասեցնելու հարցին, ապա Գերմանիան դա բացառում էր այն պատճառարանությամբ, թե Թուրքիայի վրա ճնշում գործադրելու դեպքում Թուրքիայի հետ դաշինքը կիսվեր, ինչը նա չէր կարող թույլ տալ: Սա, պետք է ասել, որ հանդիսանում էր Թուրքիայի հայասպանդ քաղաքականության հանդեպ Գերմանիայի որդեգրած հանդուրժողականության ամենածանրակշիռ հիմնավորումը: Եթե Յոհաննես Լեփսիուսը 1915 թ. օգոստոսին արտգործնախարարությունից պահանջեց ճնշում գործադրել Թուրքիայի վրա՝ հայերի տեղահանությունը դադարեցնելու և դեռ կենդանի մարդկանց հայրենիք վերադարձնելու համար, պետքարտուղարի տեղակալ Ֆիներմանը նրան առարկում էր այդ պատճառարանությամբ. «Ի՞նչ կարող ենք մենք անենք, – ասում էր նա: – Թուրքիայի հետ մեր մջու-

թյունը պահպանվում է Թալեարի և Հալիլի վեց ծեռքերի մեջ: Եթե այդ երեքը խելքի չեն գալիս, մեզ մնում է միայն հրաժարվել դաշինքից: Իսկ այդ մենք չենք կարող անել»<sup>1</sup>:

Գերմանիայի հանդուրժողականությունն այդ նոյն պատճառարանությամբ էր փորձում արդարացնել նաև պետքարտուղար ֆոն Յագովը՝ 1916 թ. սեպտեմբերի 29-ին ռայխստագի պատգամավորների առջև իր ունեցած ելույթում. «Ես կարող եմ միայն ասել, որ մենք արել ենք ամեն բան, ինչ կարող էինք. – հայտարարում էր նա: – Ամենածայրահեղը, որ մեզ դեռ մնում էր, Թուրքիայի հետ դաշինքի խզումը կլիներ: ...Թուրքերը մեզ կարևոր ծառայություններ են մատուցում՝ պաշտպանելով մեր հարավարևելյան դիրքային թևը: Դուք ինձ հետ կհամաձայնեք, որ մենք չենք կարող այնքան հեռու գնալ, որ թուրքերի հետ, որոնց մենք հայկական հարցի վերաբերյալ մեր տևական նախազգուշացումներով խիստ անտրամադիր ենք դարձել, նաև մեր դաշինքը խզենք»<sup>2</sup>:

Այն, որ Գերմանիան պատրաստ էր հանուն դաշինքի պահպանան զոհաբերել հայ ժողովրդին, ոչ ոքի համար գաղտնիք չէ, և չէր թաքցում նաև Կոստանդնուպոլսում Գերմանիայի դեսպան Վանգենիայի կողմից, ըստ որի՝ Գերմանիայի համար գիշավոր խնդիրը պատերազմը շահելն էր: Այդ տեսանկյունով էր առաջնորդում նաև գերմանական արտգործնախարարությունը՝ 1915 թ. հոկտեմբերի 6-ին մամուլի ներկայացուցիչներին ուղղելով հետևյալ հրահանգը. «Հայկական կոտորածների մասին պետք է ասել հետևյալը. Թուրքիայի հետ մեր բարեկամական հարաբերությունները նրանց ներքին գործերի պատճառով ոչ միայն չպետք է վտանգվեն, այլև ներկա ծանր պահին նույնիսկ չպետք է քննվեն: Այդ իսկ պատճառով առժամանակ պետք է պարտավորություն համարել լրելը: Հետագայում, եթե արտերկրի կողմից

<sup>1</sup> Lepsius J. Der Todesgang des armenischen Volkes, Potsdam, 1919, էջ XXII:

<sup>2</sup> St. u. Lamme P. Armenien: Der erste Völkermord des 20. Jahrhunderts, München, 1977, էջ 146: Հման. Lepsius J. Deutschland und Armenien 1914–1918, Sammlung diplomatischer Aktenstücke, Herausgegeben und eingeleitet von Dr. Johannes Lepsius, Potsdam, 1919, էջ 294:

գերմանական մեղսակցության պատճառով ուղղակի մեղադրանքներ ի հայտ կգան, անհրաժեշտ կլինի հարցը մեծ զգուշությամբ և վերապահությամբ դիտարկել և պնդել, որ բուրքերը հայերի կողմից ուժգին գրգռվել էին»<sup>3</sup>:

Վերջին տարիներին հրապարակ եկած փաստաթղթերը, սակայն, սպառչ կերպով փաստում են, որ հայերի տեղահանության արգելման դեպքում դաշինքի խզման՝ Գերմանիայի այս պատճառաբանությունն ամենակին էլ իրատեսական կամ հավատի չէր: Ավելին, ինչպես վկայում էր Կոստանդնուպոլիսի դեսպան Կանգենիայի կողմից դեռ 1915 թ. մայիսի 31-ին արտգործնախարարությանն ուղարկված հեռագիրը, բուրքական կառավարությունը նույնպես լրջորեն հաշվի էր նստում այն հանգամանքի հետ, որ Գերմանիան կարող էր արգելել հայերի տեղահանությունը, և, ես կամենում եմ սա ընդգծված կերպով նշել, Ենքեր փաշան դեսպանին քախանձագին խնդրում էր իրեն այդ հարցում շխանգարել, կամ, եթե բառացի հետմ, «փր ձեռքը շրոնել»:

Այն, որ Գերմանիան կարող էր առանց դաշինքը վտանգելու կանխել կամ կասեցնել հայոց ցեղասպանությունը, սպառչ կերպով փաստարկվել է ինչպես մի շարք գերմանացի դիվանագետների, այնպես էլ առանձին բարձրաստիճան զինվորականների կողմից: Դրա անառարկելի ապացույցը տվեց, օրինակ, Թուրքիայում գերմանական ռազմական միսիայի դեկավար գեներալ Լիման ֆոն Սանդերսը, որը 1916 թ-ի նոյեմբերին գենքի գործադրման սպառնալիքով բուրքական իշխանություններին արգելեց աքսորել Զմյունիայի հայությանը: Ահա այդ մասին հենց իր՝ ֆոն Սանդերսի կողմից հաղորդված տեղեկությունը՝ «Նոյեմբերի 10-ի առավոտյան ես 5-րդ բանակի շտարի պետին՝ գնդապետ Քյազիմ բեյին ուղարկեցի վայի մոտ և կարգադրեցի նրան ասել, որ ես այլև չեմ հանդուրժելու զանգվածային ձերբակալությունները և փոխադրումները, որոնք կատարվելով թշնամու սպառնալիքի տակ գտնվող մի քաղաքում՝ մուտք էին գործում ռազմական տարածաշրջան, իսկ եթե, այնուամենայնիվ,

<sup>3</sup> Vierbücher H. Was die kaiserliche Regierung den deutschen Untertanen verschwiegen hat, Armenien 1915, Hamburg, 1930, էջ 78:

ուստիկանությունն այդ միջոցառումները շարունակեր, ապա ես իմ ենթակայության տակ գտնվող զորամասերի միջոցով դրանք արգելելու էի: Ես վայի մինչև կեսօր ժամանակ տվեցի վճռ կայացնելու համար: Զմյունիայում հրամանատարող գեներալ, պրուսական գնդապետ Մթումերին, որն արդեն իրազեկ էր իրադրությանը, ես մայոր Պրիդգերի միջոցով ծանուցեցի վերոնշյալի և անհրաժեշտության դեպքում ձեռնարկվելիք միջոցառումների մասին: Մոտավորապես կեսօրվա ժամը 13:30-ին մայոր Քյազիմ բեյը վայի մոտից վերադարձավ և ինձ հայտնեց, որ ձերբակալություններն ու փոխադրումները կանգնեցվել էին և այլև տեղի չին ունենալու»<sup>4</sup>:

Մի նման ապացույց տվել է նաև ֆելդմարշալ Կոլմար ֆոն դեր Գոլքը, որն ընդուուած իր հրաժարականի հեռանկարով 1915 թ-ի դեկտեմբերին կարողացավ կանխել Սոսուի, ինչպես և այնտեղ գտնվող Բաղդադի հայերի տեղահանությունը: Դա փոքր-ինչ ավելի հանգամանալից ներկայացնելու համար հարկ է նշել, որ երբ 1915 թ-ի դեկտեմբերին որոշում կայացվեց Մոսուլում գտնվող հայերին դեպի Եփրատ ուղարկելու մասին, ֆոն դեր Գոլքըց «տագմանական տեսանկյունից այդ՝ ամենաին շարդարացված միջոցառման» հարցում ընդդիմացավ տեղական իշխանություններին: «Խնդիրը ձգվեց համարյա մի ամբողջ ամիս, – նշում էր ժամանակակիցը, – և ֆելդմարշալը սկզբում կարողացավ հասնել միայն այն բանին, որ հայերը Մոսուլում առժամանակ այլ ցուցումի սպասեին: Երբ մինչև հունվարի կեսը Կ. Պոլսից ոչ մի ցուցում չեկավ, ֆելդմարշալը, ելեւով իր՝ գերագույն հրամանատարի իրավունքներից, Մոսուլի վայի արգելեց հայերին տեղահանել: Վային նորից այդ մասին տեղեկություն ուղարկեց Կ. Պոլիս: Մինչև հունվարի 27-ը պատասխան չստացվեց: Ապա մի տեղեկություն եկավ այն մասին, որ կառավարությունը շարունա-

<sup>4</sup> Տե՛ս Lepsius J. Deutschland und Armenien..., թիվ 307 արձանագրությունը: Այդ միջադեպի վերաբերյալ այլ տեղեկություններ ստանալու համար տեսն անդ, թիվ 306 արձանագրությունը: Հնմտ. Vierbücher H. Was die kaiserliche Regierung den deutschen Untertanen verschwiegen hat..., էջ 75: Հնմտ. Lepsius J. Der Prozeß Teilirian-Talaat, "Der Orient", 1921, էջ 70:

կում է պնդել տեղահանման անհրաժեշտությունը: Դրանից հետո ֆելդմարշալը հեռագրով անմիջապես իրաժարական ներկայացրեց: Միայն այդ ժամանակ Ենվեր փաշան նի գաղտնի հեռագրով պատասխանեց, որտեղ հավաստիացնում էր, որ Սոսուլի հայերը կմնան այնտեղ, և ի միջի այլոց, սակայն, ֆելդմարշալին հայտնում էր, որ նրա՝ գերազույն իրամանատարի լիազորությունները նրան իրավունք չեն ընձեռում միջամտել քուրքական կայսրության ներքին գործերին»<sup>5</sup>:

Ենվերի այդ նախազգուշացումն, իհարկե, իրավականորեն միանգամայն անհիմն էր, քանի որ, եթե նկատի առնենք, որ հայ ժողովրդի տեղահանման ծրագրը երիտրուքական կառավարողների կողմից պատճառարանվում էր բացառապես ռազմաստրատեգիական պատրվակներով, ապա կասկած չի կարող հարուցել, որ Թուրքիայում գտնվող գերմանական բարձրաստիճան զինվորականությունը, նույնիսկ Թուրքիայի ներքին գործերին չմիջամտելու՝ գերմանական կառավարության որդեգրած միանշանակ դիրքորոշման դեպքում ռազմաստրատեգիական նկատառումներով ամենակին չարդարացվող այդ ծրագիրն արգելելու բոլոր հնարավորություններն ուներ, և պատահական չէ, որ ինչպես ֆոն դեր Գոլդը Մոսուլի, այնպես էլ Լիճան ֆոն Սանդերը Զյունիխի հայերի աքսորման՝ Վերոհիշյալ արգելքները հիմնավորում էին հենց ռազմաստրատեգիական նկատառումներով:

Եթե միայն այդ երկու բարձրաստիճան զինվորականներն առանց Քեռլինին հարցնելու, սեփական նախաձեռնությամբ կարողացան դա անել, ապա որքան մեծ գործ կարող էր կատարել գերմանական կառավարության ազդեցիկ ճնշումը:

Դաշինքի խզման հետ կապված պաշտոնական Գերմանիայի պատճառարանությունների սնանկությունը փաստարկվել է նաև գերմանական բազմաթիվ հյուպատոսների և այլ դիվանագետների կողմից, որոնք, հանգամանալից ներկայացնելով եղերական իրադարձությունների բնույթը, ծրագրայնությունը, ըն-

<sup>5</sup> Տե՛ս Lepsius J. Deutschland und Armenien..., թիվ 224 արձանագրությունը:

թացքն ու իրեշավոր ենթատեքստը և հերքելով հայ ժողովրդի տեղահանման ստրատեգիական պատրվակները՝ հաճախ նաև իրենց անքարույց անհամածայնությունն էին արտահայտում ոճրագործությունների նկատմամբ Գերմանիայի ցուցաբերած անտարերության և իրողությունները կոծկելու՝ գերմանական մամուլի որդեգրած քաղաքականության համբեաց<sup>6</sup>: Բազմաթիվ օրինակներից ես այստեղ եղեմ միայն մեկը՝ կանցլերին ուղղված՝ Հալեայի հյուպատոս Ռուպերի՝ 1915 թ. հուլիսի 27-ի տեղեկագիրը: «Իմ միջնայժմյան հեռագրային և գրավոր տեղեկատվությամբ, – գրում էր հյուպատոսը, – կարելի է փաստարկված համարել, որ բուրքական կառավարությունը գիտակցարար նպատակադրվել է հայ ժողովրդի հնարավորին չափ մեծ զանգվածների այնպիսի միջոցներով բնաջնջելու, որոնք փոխ են առնված հնարարից, սակայն անպատվարեր են մի կառավարության համար, որն ուզում է դաշնակցած լինել Գերմանիայի հետ: Կասկած լինել չի կարող, որ նա մտադրվել է քայլակի հետ պատերազմի մեջ գտնվելու առիթն օգտագործել՝ հնարավորին չափ քիչ փակ հայ համայնքներ բողնելու միջոցով ապագայում Հայկական հարցից ազատվելու համար: Նա փոքրարիվ մեղավորների հետ զոհաբերել է անմեղների բազմությունները: ...Թուրքական կառավարությունն իր միանգամայն անմեղ հայ հպատակներին պատերազմի գոտուց հեռացնելու անհրաժեշտության պատրվակնով հազարներով և տասնյակ հազարներով քել է անապատ, բացառություն չամելով ոչ հիվանդների, ոչ հիճների և ոչ էլ գորակոշված զինվորների ընտանիքների համար..., ոչինչ չի ձեռնարկել նրանց մեջ բռնկված համաճարակների դեմ, կանանց այնպիսի զրկանքների և հուսահատության մեջ է նետել, որ նրանք իրենց ծծկեր և նորածին երեխաներին նետել են ճանապարհի վրա, իրենց՝ հասունության մոտեցող աղջիկներին վաճառել են, իսկ շատերն ել իրենց փոքրիկ երեխաների հետ նետվել գետը: Նա նրանց մատ-

<sup>6</sup> Տե՛ս թեմային առնչվող եյտապատոսական տեղեկագրերը Յոհ. Լեփիդոսի “Deutschland und Armenien...” և Վ. Միքայելյանի կողմից կազմված “Die Armenische Frage und der Genozid an den Armeniern, zusammengestellt und eingeleitet von Pr. Dr. Wardges Mikaeljan, Jerewan 2004” ժողովածումներում:

նել է ուղեկցող գորախմբի կամայականություններին և այդպիսավ անարգանքների ու անպատվության, մի զորախմբի, որը տիրացել է աղջկմերին և վաճառել նրանց: Նա նրանց նետել է բնովինների ձեռքը, որոնք նրանց կողոպտել և առևանգել են: Նա տղամարդկանց մեկուսի վայրերում անօրինաբար ոչնչացրել է և իր զոհերի դիերը կեր դարձրել շներին ու գիշատիչ քաջուններին: Նա իրեւ թե «աքսորավայր» ուղարկված պատգամավորներին սպանել է, բանտերից ազատել է կալանավորներին, հազրել նրանց զինվորի հանազգեստ և ուղարկել այն վայրերը, որտեղով պետք է անցնեին աքսորյալները: Նա հավաքագրել է շերքեզ կամավորների և նրանց ուղեկի հայերի վրա...: Հնարավոր չէ՞ր գեր այսօր կասեցնել հետագա սարսափները և գոնեն փրկվել Հալեպի վիլայեթի ծովափնյա տարածքների հայերին, որոնց աքսորումը դեռ առջևում է: ...Միթե՞ Բեյլանը, Սուկուլը, Քեսարը և մյուս շրջանները պատերազմական գոտի են: Միթե՞ այնտեղ կանանց և երեխաների ներկայությունը փոտանզավոր է, չէ՞ որ բոլոր տղամարդիկ գորակոչվել են...»<sup>7</sup>:

Այն, որ Գերմանիան կարող էր Թուրքիայի վրա ճնշում գործադրելու միջոցով կանխել կամ արգելել հայերի քնաջնջումը, քազմաքիվ հյուպատոսների հետ մեկտեղ միանշանակորեն հաստատում էր նաև 1915 թ-ի նոյեմբերի 15-ից Վաճգենիայմին հաջորդած նոր դեսպան Վոլֆ Սետեռնիխը, որն, ի տարբերություն իր նախորդի, փորձեց իր բոլոր հնարավորությունները գործադրել դեռ կենդանի աքսորյալներին օգնելու և երիտրութերի հայասպանդ քաղաքականությունը կասեցնելու համար, շնայած այն արդեն թևակոխել էր իր վերջին փուլը: «...Նաև մեր մանուլը պետք է զայրույթ արտահայտի հայերի հալածանքների հանդեպ և դադարի թուրքերին քծնել, – գրում էր նա 1915 թ-ի դեկտեմբերի 7-ին կանցլեր Բերման Հոլվեգին: – Այն, ինչ նրանք պատերազմի դաշտում անում են, մեր գործն է, մեր սպաներն են,

մեր հրանորները, մեր դրամը: Առանց մեր օգնության այդ փրկած գորտը կիուվի: Մենք ամենեկին կարիք չունենք այդքան երկյուղած վերաբերվել թուրքերին: Նրանք հեշտությամբ չեն կարող անցնել մյուս կողմը և խաղաղություն կնքել: Անգլիական կառավարությունն այժմյան իշխանավորների հետ հեշտությամբ պայմանագիր չի կնքի: ...Նա տարիներ ի վեր փորձում է Ենվերին տապալել: Չափազանց անհավանական է, որ նա այժմյան իշխանավորների հետ սեպարատ հաշտության գծուի: Առավել ևս անհավանական է, որ նա Ենվեր փաշային օգտագործի ընդհանուր խաղաղության հաստատման փորձերում: Դրա համար նա ունի հարյուրավոր այլ բաց ճանապարհներ: Հայկական հարցում հաջողություն ունենալու համար մենք պետք է բոլքական կառավարությանը վախ ներշնչենք հետևանքների հանդեպ: Եթե մենք, ռազմական նկատառումներից ենելով, շահմարձակվենք ավելի վճռականորեն հանդես գալ, ապա մեզ այլ բան չի մնա, քան հետագա անպտուղ բողոքների հետ մեկտեղ, որոնք ավելի շարացնում են, քան օգուտ տալիս, դիտել, թե ինչպես է մեր դաշնակիցը շարունակում սպանելը»:

Սետեռնիխի պաշտոնավարության ժամանակ, սակայն, հայ ժողովրդի տեղահանման և բնաջնջման գործընթացն արդեն հիմնականում ավարտվել էր, և նրա միջամտություններն, այլև անկարող լինելով կասեցնել իրենց անպատճելիության համոզումը ստացած երիտրութերի քաղաքականությունը, նաև փոփոխել այդ քաղաքականության հանդեպ Գերմանիայի լոյալ դիրքորոշումը՝ պատճառ դարձան Բարձր Դռան հետ նրա փոխհարաբերությունների վատքարացման, որի հետևանքով, Ենվերի կողմից գերմանական կառավարությանն ուղղված բողոքների հիման վրա նա ետ կանչվեց:

Ներկայումս հրապարակում գտնվող սկզբնադրյուններն, այսպիսով, միանշանակորեն փաստում են, որ հայ ժողովրդի բնաջնջման՝ բոլքական քաղաքականության հանդեպ պաշտոնական Գերմանիայի ցուցաբերած հանդրժողականությունը կատարելապես զորկ էր այն հիմնավորումներից, որոնք վկայակոչվում էին գերմանական կառավարության կողմից: Չնայած

<sup>7</sup> Siev Lepsius J. Deutschland und Armenien..., էջ 110–111: Հմատ. թեմային առնչվող մյուս հյուպատոսական տեղեկագրերը Յոհ. Լեփսիոսի «Deutschland und Armenien...» և Վ. Միքայելյանի «Die Armenische Frage und der Genozid an den Armeniern...» ժողովածուներում:

մեղսակցության մեղադրանքներից խուսափելու նպատակով Գերմանիան ջանում էր իր գինվորականներին և դիվանագետներին զերծ պահել եղեռնագործություններին մասնակցելուց, այնուհանդերձ, հենց միայն ոչնչով շիհմնավորված այդ հանդուրժողականությունը նրան դարձնում է մեղսակից և համապատասխանատու: